Ա. ՇԱՐԱԿ 1874 ՅՈՒԼԻՍ 3 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ Ե. Տ. ՅՈՒԼԻՍ 15 ԹՎ. 43

ԱՄԻՍ կը հրատարակուի ամեն օր։
Տարեկան (500 թերց) բաժանորդագրութիւն
է 1 1/2 Օսմանեան։
Սեմեստրեան (25 թերց) բաժանորդագրութիւն
կը պահանջուի առանձ դրչ. 15
Գառաւոյ համար 500 թերթ 9 արծաթ մէջտեղ
» » 150 » 4 1/2 » »
Թերթ առ թերթի կը նստի 20 փր.

ԱՍԻԱ

ՀԱՅԵՐԵՆ ՀԱՅԵՐԵՆԻ

ԼՐԱԳԻՐ

Գառաւոյ համար 500 թերթ 9 արծաթ մէջտեղ
Բաժանորդագրութիւն ընդունուի միայն
թերթի տէր Գրիգոր Գալֆայեանէն։
Լրագրոյս գրագրութիւնք, որ հասցէ ստանան
թերթն ուղղեալ է տալու, ուղղուին Խմբագրութեան
Գալաթիա Հայոց Եկեղեցւոյ փողոց
թիւ 1։

20 ՓՐ. 20 ՓՐ.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՒ ՍՅԼԱ.

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ ուրբաթ օր Զ. Գանձիք Քաղաքական ժողովոյն ներկայացիր են Զօրս Վ.ի ինդրոյն համար։ Քաղաքական ժողովը երբեւ թէ առանձին անդամ տեսած ըլլար այդ մարդիկը, երանց խնդիրն ինչ ըլլալը կը հարցունէ, և երբ հիմանց թէ Զօրսին Կ. Զօրս բերուելը կը պահանջեն, «Լաւ, ուրեմն բերել տանք» կը պատասխանէ։ Գառաւանն ալ երկնչելով [illegible] ելլալ։ Սակայն Քաղ. ժողովը երբ բերել տալուն նիստամամբ խօսք մը չուզէր ընել և «Այդ մեր գիտնալիք բանն է» կըսէ։

Մեր ալ գիտցածն ու գիտնալիքը սա է որ երբ Վարչութիւնը Զօրսի պէս անպիտանի մը՝ որ ոչ թէ վարդապետ այլ մարդ կոչուելու արժանի չէ իր վրայ եղած ամբաստանութեանց նայելով. երբ կը սենմը վարչութիւնը այսպիսիներու համար դառն բողոքներ եղած առեն անտարբերութեամբ կը շարժի, ա՛լ ի՞նչպէս անիրաւները չը յուսահատին չը շատանան այս ազգին մէջ և բարիները չը վնասին։

ՌՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շ-ր. Տե՛ս թիւ 38)

Գ. Բողոքականութիւնն անհաստատ է թէ հաստատ պատճառ կրնայ ունենալ։

Իրաւ է որ բողոքականաց բերանը ամենէն շատ հաստատ բառը կը պտըտի. և անանկ կը կերևնի, որպէս թէ ուրիշ բան չեն ճանչնար բայց եթէ «Հաւատք»։

Սակայն դժբաղդաբար աս բառը ճշգրիտ նշանակութիւն մը չունի իրենց մէջ, և եթէ երբեք նշանակութիւն մը ունի, ան ալ բուն ճշմարիտը չէ, և կամ բառին հոկաստ իմաստը որ է անհաստատութիւն։

Երբոր խոստացութիւն մ՚ըլլա, և բաւի թէ ոչինչ մարդուն հաւատք չունիք մ՚ի գործուեր, կամ այն ինչ մարդը առանի տեսիլը մ՚է տեսեր, ա՛ր կամ՝ գրքերն են որ առ հասարակ և գրեթէ առանց բացառութեան կը խնդան և ծաղրել կ՚ուզեն։—Բողոքականք։—

Բնչան չեն հաստատ թէ որ Աւետարանը կ՚ընդունին և Գրքերուն խոսքին վրա արժէք կը դնեն, որ յատկապէս հրաշից վրա խոսելով ըսաւ թէ «Որ բանիրը պիտի երթան ամեն անոնց հետ որ կը հաստատեն, թէ թէ «Հաւատացողին ամեն բան հնարաւոր է»։

Հոս տեղ մեր քաղ հարկաւորն մեկնութիւնը թէ «Հին ժամանակը պէտք էր ու կըլլար, բայց հիմա պէտք չէ և չըլլար»։

Բայց այդ կարգումը չը ըրուներ, որովհետև առանի խոսք մը հին և նոր Կտակարաններին բնաւ տեղի չունենալէն զատ, ինչպէս որ վերն ալ յառաջ բերինք, ընդհակառակն կը հաստատեն, թէ «այս դերբնական զօրութիւնը հաւատացողց հետ պիտի երթայ միշտ»։

Իրաւ է որ առանի զօրութիւն ունենալ ձեռնադրով շատ խարդախութիւններ ու խաբէութիւններ տեղի ունեցած են։ Սակայն, եթէ չիտակ օգտուելք մ՚է «սուրբ մէջ խարդախութիւններ ալ կըլլան» ըսելով ամենը մէկ տեղ չուրը տալ, ինչ իրաւամբ կրնան մեզադրելի ըլլալ անոնք, որ շատ մը տեղ կը ծանրանքը տեսնելուքին «բնաւ չիտակ կրօնք չըկա և չը կրնար ըլլալ» կըսեն. և միթէ այդպիսի սեղբունք մը յայտնելուքին մարդիկ այս յոռի դատողութեանը առաջնորդած չէ՞ն ըլլար Բողոքականք։

Մեր գիտցած ու ճանչցած Քրիստոսն երբեք չորս գլխաւոր կէտերը ուներ, զորս կուզեր ամեն հնարաւոր պարզութեամբ խօսիլ, և ժողովրդոց հասկնալի ընել, և որք են՝ Հոգ, Հաւատք, Անկեղծութիւն և հաւատք. որոնցմով բնութեան օրինաց ենթակա եղող մարդս դրնա Աստուծոյ տրդի ըլլալ և բնութեան օրէնքներէն վերը բարձրանալ. և մեր գիտցած Աւետարանը ինչ որ խոսած է, բոլորը այս չորս կետերէն մէկը կամ մէկալ չորսովքը ելլով անցած է, որ ըսել է, Բրիստոսի քարոզութեան բոլոր էութիւնը այս չորս կետերուն վրայ թաղուած է, որ մարդիկ այս շնորհաց հասին։ Եւ ընդհակառակն, Բողոքականութեան ալ բոլոր էութիւն է, այս չորս կետերը ազիարհի երեսին բնաջինջ ընել։ Եւ այսուամենայնիւ [illegible] Աւետարանական վիճակ կրօնք մը։

Ուրեմն միսիոնարաց քարոզած Քրիստոսն ու Աւետարանը չէ։ Թէ միայն տարբերը է մեր գիտցածէն, այլ մանաւանդ հակառակ է ըստ ամենայնի. և եթէ տարբերը Աւետարան բերող ու քարոզողներուն «Նորվեալ ելլան» ըսած է Աւետարանը, ամենայնիւ հակառակը քարոզողներուն ինչ գատապարտութիւն կրնայ ըլլալ, թող ընթերցողը գատէ։

Ասանկ կրօնք մը՝ որուն գլխաւոր հիմունքներն են ազգամեան աղդերը, ուրիշնալութիւնը չնութիւնը մարդասպանութիւնը՝ հաստատակ մարդոց մէջ՝ իսկ որբութեան և բարեգործ կրօնասիրութեան տեսերևոյթին տակ գործուած անպրթութիւնն ու կերպ կերպ խաբէութիւնն, դերեվարական դառն կապանքներն և անբարբերելի արբապղծութիւնները պատուաւոր սեղուած կարդին մէջ ՀՈՒՐԻ պէս տվզական եղած են։

Մենք Բողոքականութեան հարմարը պարտեցանք, և անոր ոչ միայն արտաքին չլացուցիչ երևոյթներուն զմայլած ետ դարձանք, ինչպէս որ շատերը կընեն. այլ և անոր ներքին հոգին առանելու դառն բաղդը ունեցանք. և գտանք որ առանց բացառութեան, բողոքականութեան դրեթէ ամեն ազանդներն ալ՝ հոգ՝ չէ առ երևոյթս մեկը զմեկէ որչափ կը տարբերին, այլ վերոյիշեալ նեռութեանց մէջ ամենքն ալ միացած են։

Հոս յատկապէս կուզէի յատուկ բերել մեկ նշանաւոր կէտ մը, այն է, թէ բողոքականութիւնը ինչ դէշ ազդեցութիւն մ՚ըրած է հայ բողոքականաց վրայ, և թնարը դանդ իրենց ի յատկանէ անձանց եղած նուաստութեանց և անբարոյականութեանց լիքեցաց։ . . բոց . . .։

Ռ. Ց. Գ-ՐԳՈ-ԿԱՆ

ՍՈՒՐԻԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԳԱՆՏՈՒՐԱՆԱԼՆԵՐ

Նէգոկիայի բարեկամ մը Նեբատիայէն հետեւեալը կը գրէ մեզ։ Ան որ իր կուրծքին մէջ մարդասիրութեան սիրտ մը կը կրէ, չը կրնար անտարբեր անթաց ալեքով կարդալ այդ տողերը։ Երանի թէ այդ թանգուած արտասուքները աւաւանան ցօղի պէս զովարար ըլլային թշուառ բանտարկեալներուն սրտերուն։ Գրեթէ թէ մեր Սամն. Ս. Գառաբեդը՝ Հոր ուշադրութեանն ալ արժանանային այս տողերը, որպէս զի նեղուկիոյ պէս Հայաստան քարաք մը տեսնուին ընդ երկար դուրսի իր Աստուծոյ նորդէն և անպէտնոսան չը մնար։

«Սեբաստիոյ նորընտիր գուսակալ Վսեմ. Հաճի Իզզէթ Փաշան Նէգոկիայէն անցած առեն Սեբաստիան էֆէնտին 6 Հայ գանգատանէ Նորին Վսեմութեան թէ առվանն պատճառաւ կառավարութեան պաշտօնատարներն յարձակող և գանգատարներուն պարագլուխներն են։ Վսեմ. գուսակալը առանց մարդասանութեան քննութեան թշուառ [illegible] ամբաստանեալները Սեբաստիոյ բերելով, մահապարտից բանտը նետէ։ Թշուառները բանտին [illegible] իրենց ծանօթ բարեկամներ [illegible] նամակներ գրելով [illegible] իրենց անօթութիւնը անցունելու համար գէթ չորաբեկ հացի [illegible] կը խնդրեն։ Մեր հայրենակցաց [illegible]

աղիողորմ վիճակը լսելով, 'ի բանտ փութայն մի քանի ընկերներով. բայց ոստիկանութեան կողմէն թոյլատուութիւն չեղաւ մեզ քովերնին գնալու։ Գեր. Առաջնորդ Պետրոս վարդապետին դիմեցինք որ ղմեզ քաջալերեց ի նպաստ բանտարկելոց հանդանակութիւն մը բանալու, ուաջին անգամ ինք մասնակցելով։»

«Ա՛հ, բարեկամ, երբ այս բանտարկեալներուն թշուառ վիճակը կը պատկերանայ աչքիս առջև, սոսկում մը կզգամ նոյն իսկ մարդկային ընկերութենէն։ Անոնք հոց կուզեն, ասոնք չղթայներ կը ցուցնեն. անոնք ջուր կուզեն, ասոնք իրենց արտասուքներն խմցունել կուտան։ Խուժանին մէջէն մէկ քանի մարդիկ չափանցութիւններ կընեն, անմեղները կը դատապարտուին։ Թայն ալ չորին հետ կը վառուի. սկզբունք մ'եղած է այս։ Եւ մարդկային ընկերութիւնը ասամենքը կընե յանուն հասարակաց անդորրութեան և երջանկութեան . . . ։ Ա՛ղնիւ բարեկամ, թա՛ղբանտարկելոց անձնական տխուր վիճակը, հապա անդին իրենց խեղճ ընտանիքը զուրկ իրենց դլխաւորներէն, այսպիսի նեղութեան ժամանակ մը ի՛նչպէս աղիողորմ ու սոսկալի կապրին արդեօք։ Թշուառնե՛ր . . . ։ Եթէ անմեղներուն պաշտպան վրէժխնդիր Աստուած մը կայ երկինքը (որուն համար տարակոյս ունենալ երբէք ներելի չէ), արթընցունե՛ր ժամ յառաջ սա Սուքիասեանին մեռած խիղճը որ ղդարթէ ի՞նչ կընէ . . . ։ Հապա ի՞նչ ընենք Տ. Ստեփան անուն դինեմոլ և զառամեալ չ'քահանայն ալ որ Եւդոկիան առանց Առաջնորդի դատ ըլլալով, Սուքիասեանին ձեռքէն բռնած իբրև Առաջնորդ կը խաղայ։ Երբ սովին պատճառաւ ժողովուրդը կառավարութեան դուռը խուժելով անվայել ցոյցեր կընէ, Տ. Ստեփան կառավարութեան դուռը կը դանուի. և երբ պաշտօնեայք իրեն կը հարցունեն թէ ձեր աղդէն ալ մարդիկ կա՞ն խուժանին մէջ, Տ. Ստեփան կը պատասխանէ թէ ամենքն ալ Հայեր են. մինչդեռ Հայերը աննշան մասմը կը կազմեն եղեր այդ խուժանին մէջ։ Գուցէ Տ. Ստեփան դինով եղած ըլլայ այն միջոցին . . . ։ Ե՛րբ այսպիսի Կիրակոսներն ու Սուրմակներ պիտի պակսին մեր մէջէն։»

«Նամակս պիտի դոցէի, և ահա բանտէն դրութիւն մ'եկած տեսայ իմ մէկ բարեկամիս. որուն համառօտ օրինակը ահաւասիկ. ա՛լ կը հասկցուի թէ ինչ խեղճութեան մէջ են եղեր։»

. . . Ստակի կողմանէ շատ նեղութեան մէջ ենք, ոչինչ չունինք. հոս բերուած ատեններս ալ հետերնիս չը կրցանք ստակ առնել. անցեալ օր ձեր բարեկամութիւնը քանի դր. որ տուաւ, բոլոր ունեցածնիս ան էր, ան ալ հատաւ, ամեն մէկերնիս մէկու երեքական դր. հայի համար պարտք ըրած ենք, ուստի ալ չենք տար մեզ։ Կաղաչենք, մենք արդէն քաղաքներս աղքատութեան զոհ եղած էինք, հոս ալ բանտին մէջ անօթութեան զոհ պիտի ըլլանք ըմենք։

Ա՛հ, կ'աղաչենք 'ի սէր Աստուծոյ և մարդկութեան, մեզ ազատեցէք ասկէ։

ԳՐԻԳՈՐ Վ. ԵՐԱՆՈՍԵԱՆ

Բանտարկեալ հիւթ ընկերք

Ուրբաթ Երեկոյին Էջմիածնի Վ.Հ. Կաթուղիկոսէն հեռաձայն ընդհատումի հեռագիրն եկած է ի Պարիսաքարան։

Էջմիածին 12 Յուն. (ըստ Լատ.) 1874

Նորին Սրբազնութիւն Ներսէս Արքեպիսկոպոս Պարիսաբք Հայոց

Ի Կ. Պոլիս

Ձեր համաձայնութեամբ ընտրութիւնն ի Պարիսաբքութիւն՝ կը ներշնչէ յիս աղդային վարդումանց մօտալուտ խաղաղութիւն։

Կաղաչեմ ղԱստուած ի բոլոր սրտէ որ պահպանէ ղձեզ ընդ հովանեաւ իւրով։

Կաթուղիկոս և Ծայրագոյն Պարիսաբք Հայոց

ԳԷՈՐԳ

Մայրաքաղաքիս Պարսկական դեսպան Միրզա Մոհսին Խան անցեալ շաբաթ օր այցելութեան եկաւ Մեր Ազգային Պարիսաբքարանը։

Էջմիածնի Վ.Հ. Աթոռոյ Կաթուղիկոսը ճեմարան մը կառուցած ըլլալով, Կ. Պոլսոյ Ազգ. Վարչութենէն երկու և Տաճկաստանի Առաջնորդական վիճակներէն ալ մէկ մէկ տղայ ուղեր է նոյն դպրոցին մէջ ճրիաբար դաստիարակուելու համար։ Ճեմարանը սեպտեմբեր ամսոյն պիտի բացուի եղեր։

Կը փափաքինք որ Ազգ. Վարչութիւնը այսու առթիւ նախ տեղեկութիւն խնդրէ Վ.Հ. Կաթուղիկոսէն թէ Ռուսաստանի Ազգ. Վարժարանաց համար պատրաստած ըլլալը մինչև ո՞ր ասպիճան ստուգութիւն ունին։

Լսածնուս նայելով Ազգ. Վարչութիւնը Ռուսական խորհրդոյն յանձնելը է, մայրաքաղաքիս ղբրկուելիք երկու տղաները որոշել։

Վ.Հ. Կաթուղիկոսը նորընտիր Պարիսաբքին ղրեր է որ հանդուցեալ Պօղոս և Իգնատիոս Պարիսաբքաց և Սէթեան, Կապուտիկեան և Կուտինայի Յովսէփ եպիսկոպոսներուն Պնակիներն ու Խաչերը որոնք Էջմիածնէն տրուած են իրենց, Մայր աթոռը վերադարձուին։

Շաբաթ օր Յունաց Պարիսաբքական փոխանորդ Հայրը երկու եպիսկոպոսներով երկու սարկաւագներով և երկու ալ հատաղճիներով մեր Պարիսաբքարանը այցելութեան եկաւ։ Սրբազան Պարիսաբքին և մեր Պարիսաբքական Գեր. փոխանորդին հետ սիրալիր խօսակցութիւններ ըրեր են ղբրս թարգմաներ է Զօլաղեան Տիմոթիոս էֆէնտին։ Մայր Եկեղեցին ալ ինչելով աղօթեր են։

Ցայտնի է թէ այս բոլոր ձեւերը որչափ ալ համակրական ըլլան, քաղաքավարութենէն անդին նշանակութիւն մը չունին։

Փանոսեան էֆէնտին կը հրատարակէ թէ յառաջիկայ կիրակի օր Ազգապետան և Փանոսեան վարժարանաց Տարեդարձի հանդէսը պիտի կատարէ Թարապիա Հիւնքեար Բէօշկիւ ըստուած խիստ գեղեցիկ դիր և զմայլելի դբօսավայրը։

Երթևեկութեան տոմսակները 2 արծաթ մէճիտի պիտի ծախուին։ Իսկ հանդիսին յատկացեալ շրջենաւով չերթալով, դբօսավայրը հանդիսին մասնակցիլ միայն ուղղներուն մէկ մէճիտանոց տոմսակ պիտի տրուի։ Նաև հայկերոյթ ալ պիտի ըլլայ։ Նուագածուաց ընտիր խումբ մը և յատկապէս հրաւիրեալ երգչի ատենաբանք ներկայ պիտի դտնուին։

Փանոսեան էֆէնտին շաբաթ օրէն ոկսաւ օրը երկու Մանղումէ հրատարակել։ Առաւօտեան թերթով նախորդ օրուան վերջին լուրերը պիտի հրատարակէ կանուխկեկ։ Այս թերթը որ երեկոյեանէն փոքր դիրքով մ'է, բաժանորդագրութիւն չունի և թերթ առ թերթ 20 փրայ-ի պիտի ծախուի լրագրավաճառաց ձեռօք։ Ընթերցողաց համար քառամսեայ վիճակահանութիւն մը պիտի ըլլայ որմէ հինգ թիւ պիտի շահին. առաջինը՝ 50 ոսկի. երկրորդը՝ 10 ոսկի և ճեպեալ երեքն ալ 5ական ոսկի։ Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ըստանալ ուզողները կը հրաւիրեմք շաբաթ առաւօտին թերթը կարդալու։

Լրագրոյս մէջ մաս առ մաս հրատարակուած ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏԸՆՆԱԿԸ անուն վիպասանութիւնը լրացած ըլլալով, այս օրէն կ'սկսիմք թարգմանչին և հեղինակին յառաջաբանները հրատարակել որոնք 3—4 թերթի մէջ կը լրանան։ Այնուհետև վիպասանութիւն մը թարգմանելէ յառաջ՝ դարձեալ դրքի ձեւով պիտի հրատարակեմք Աղթամարայ Խաչատուր Սրբազանին քստմնելի արարքներուն Տեղեկագիրը զոր Գեր. Երեմիա եպիսկոպոս ղրկած է Վանէն և զոր Համադումար ժողովոյ Ատենապետ Եղեսեան Եպիսկոպոսն ու Ատենադպիր Իզմիրլեան եպիսկոպոսցուն չեն ուղած ժողովոյն մէջ նկատողութեան առնուլ, ինչպէս չուզեցին նաև Խրիմեան Սրբազանին ներկայութիւնը, որպէս զի Խաչատուրի սոսկալի սրբապղծութիւնները կարենան արդարացունել։

Երբ յիշենք Խաչատուր եպիսկոպոսէն հանդուցեալ Տեղապահին 500 ոսկի կաշառք առնելը՝ նոյն իսկ ըստ խոստովանութեան Օրագրոյ, ալ պարզապէս կընայ իմացուիլ թէ Խաչատուր ի՞նչպէս արդարացած է։ Եւ այս գործը կատարողն ալ եկեղեցական Համադումար ժողով մ'է որ Եկեղեցւոյ սրբութիւնը պաշտպանելու փոխանակ՝ Խաչատուրի պէս մարդ մը ի շնորհս . . . ին արդարացունելով պղծել կը վճռէ։

Կը լսեմք թէ երկու շաբաթէն Ընդհ. ժողով պիտի դումարի ուր Խաչատուր Սրբազանի խնդիրն ալ պիտի ներկայանայ։ Ուստի արժան համարեցինք երկու երեք օրէն յիշեալ տեղեկագիրը հրատարակել ընկերիլ, որպէսզի ամեն մարդ Խաչատուրին պատկերն իր ձեռքն ունենալով, անոր ինչպէս մարդ մ'ըլլալը դիտէ հոն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴԵՐԶԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարիզ, 11 Յունիս

Այսօր Վերսայլի երեսփոխանաց երթալ դալու ատենը՝ Բարիզէն Վերսայլ տանող երկաթուղւոյն կայարանը աղմկայոյզ ցոյցեր եղան։ Պ. Կամպէթթային վրայ յարձակելով, զարկին։ Նախայարձակ եղողը և այլ մէկ քանի անձինք ձերբակալուեցան։

Բէյլի և Ռաբէլ լրագիրները տասն և հինգ օր դադարման դատապարտուեցան։

Լոնտրա, 11 Յունիս

Պ. Պուրք հասարակաց խորհրդարանին մէջ յայտնեց թէ Անգլիական կառավարութիւնը Պրուքսէլի դեսպանաժողովին համար Ռուսիոյ ըրած հրաւէրը ընդունել որոշած չէ դեռ։

Սրտաքին գործոց Բ. դիւանագիրքը խորհրդարանին իմացուց նաև թէ Յունաստան Եւրոպիոյ արքունեաց քով իր կողմէն ներկայացուցիչներ ղրկել կ'առաջարկէ։

Ուրբաթ 11 Յունիս

Պ. Պանդրոֆթ Տավիս Պերլինի Սմերիկեան դեսպան անուանեցաւ։

Սթէնք 11 Յունիս

Օսմանեան թանդարանին և Պ. Շլիէմանի խնդրոյն նկատմամբ Սմերիկեան դեսպանը բացատրուութիւններ խնդրեց մեր կառավարութենէն։

Ամենի նորընտիր Մետրապոլիտ Գեր. Պրոկոպիոսի դահակալութեան հանդէսը մեծ շքով կատարուեցաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ արհեստական դպրոցին մէջ այս տարի ալ նկարչութեան, քանդակագործութեան և ճարտարապետութեան արուեստահանդէս մը պիտի ըլլայ։ Արուեստահանդէսին բացման ժամանակը դեկտեմբեր 4ին ըլլալ որոշուած է։

Այս արուեստահանդէսը առաջին անգամ անցեալ տարի կատարուեցաւ Ահմէտ էֆէնտիին շնորհիւ, բայց անցեալ տարի ամէն մարդիկ իմացած չըլլալով, թէպէտ արհեստական ընտիր նիւթեր ի հանդէս դրուած էին, բայց այնչափ շատ չէին։ Այս տարի վեց ամիս յառաջ ծանուցուած է, որպէս զի պատրաստութիւններ տեսնուին։

—Եւրոպական լեզուով տեղական լրագիրներ գանգատ կընեն Բերայի քաղաքապետութեան դէմ այն աղտեղի ջուրի ճանբուն համար որ Բժշկական դպրոցէն Եէնի-Զարշիի փողոցը կը հոսի և իր ժահահոտութեամբը նոյն թաղի բնակչաց առողջութեան կը վնասէ։

Արդարև զարմանալի հակասութիւն մ'է այս որ Բժշկական դպրոցը դէթ իր շուրջը գտնուողներուն առողջութեանը հոգալու փոխանակ՝ ամենէն աւելի անոնց վնասակար կըլլայ իր դրացնութիւնը։

—Հինգշաբթի օր Գաղղիոյ դեսպանը ոստիկանութեան դուռը երթալով, Վ.սեմ. Հիւանի փաշային հետ տեսակցութիւն մ'ըրաւ։

—Կին մը էրիկ մարդու հագուստով ծպտեալ Բերայի արճարան մը մտնելուն համար ոստիկանութիւնը ձերբակալեր է զինքը։

Լա Թիւրքի այսու առթիւ դիտողութիւն կ'ընէ թէ ոստիկանութիւնը ինչո՞ւ համար չը ձերբակալեր Մուսթաֆա անուն խենթն ալ որ բոլորովին մերկանդամ կը շրջի ամէն կողմ։

Այսպիսի դայթակղական ընթացք մը որ հրապարակաւ փողոցներուն մէջ կը կատարուի երկու սեռէն ալ գտնուող անցորդներու առջև, արդարև արժանի է ոստիկանութեան ուշադրութեանը և Եւրոպացւոց առջև տխուր գաղափար մը կ'ընծայէ մայրաքաղաքիս նկատմամբ։

—Նորընտիր Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտին հինգշաբթի օր Վ.եհափառ Սուլթանին ներկայացաւ իւր ընտրութեանը համար շնորհակալութիւնը յայտնելու։

—Տիգրանակերտի կուսակալը հեռագրով կ'իմացնէ Բ. Դրան թէ անցեալ կիրակի օր Մալաթիայէն 43, 316 հոխա ալիւր ղրկած է Կեսարիա։

Տիգրանակերտէն, Իսնէպօլուէն Նիկոմիդիայէն և Կարինէն սովատանջներուն ցորեն ղրկելու համար կառավարութեան կողմէն դրծածուած ուղտերուն և դրաստներուն թիւը 3000ի կը հասնի։

—Բասթամպօլի ընդհանուր կառավարիչ Նաշիտ փաշա չորեքշաբթի օր Իսնէպօլիի ճանբով իր պաշտօնատեղին դնաց։

—Քէրքիւթի մէջ Հրէից թաղը երեսունի չափ մարդոց վրայ քօլերայի պէս հիւանդութիւն մ'երևելով կառավարութիւնը իսկոյն բըժիշկ կը ղրկէ քննելու համար։ Քընութեան արդիւնքէն կ'իմացուի որ ամենքը նոյն թաղին հրէայ նպարավաճառներէն պանիր առնելով կերեր են։ Այս պանիրը զոր նպարավաճառն ալ ուտելով հիւանդացեր է եղեր, թարմ պահուելու համար տերևներու մէջ դրեր է որոնք թունաւոր են եղեր։

—Զանագ-գալէի կողմերը սաստիկ տաք ընելուն համար հունձքերը վնասուեր են։ Գլխաւորապէս Թուզլայի և Գապա-պաշիի մէջտեղը արմտիք բոլորովին արևակէզ եղեր են։

—Առաջին կարգի Եւրոպացի քնարահար Պ. Քոնսոլը որ Կ. Պոլսոյ մէջ ալ մեծ անուն հանած և շատ անգամ ծափահարութեանց արժանացած է, Վ.սեմ. Գապուլի փաշային հետ Կ. Պոլիս եկաւ ուրբաթ առաւօտ։

—Շաբաթ գիշեր Ղալաթիոյ Հայոց եկեղեցւոյ փողոցին մօտերը Տաճիկ ջրհանակիր մը Հրէի մը հետ կռուած ատեն դաշունով զարկեր է։

—Բերայի և Ղալաթիոյ մէջ գողութիւնները շատնալ սկսած են։

Հինգշաբթի առաւօտ երեք գողեր Վ.ենետիկ փողոցը տուն մը կը մտնեն։ Տանուտէրը բացակայ կ'եղել։ Կինն ու աղջիկը դուրսը սրբարանին մէջ պարտողներու ոտքի ձայնն առնելով իրենց սենեկին դուռը կը բանան և երեք գողդէմերնին կը գտնեն որոնք դաշոյն ի ձեռին կպատռնան սպաննելու զիրենք։ Երեք տան մէջ գտնուած արծաթեղէններն ու գոհարեղէնները առանց ձայն հանելու անմիջապէս չը յանձնեն։ Թեղճերը սարսափահար կը կատարեն այդ հրամանը։ Ոստիկանութիւնը գողերուն հետքը կը խուզարկէ տակաւին։

դէ. հաւատունեցիր այսապագային վրայ և յուսով քայլէ։ Կեղծիքը նարնջին կեղևին կը նմանի. ինքը չ'ուտուիր, բայց ուտելու նարինջը կը պահպանէ։ Վիպասանութեան իրական պատմութիւն մը չ'ըլլալը՝ ճշմարտութեան հասնելու արգելք չ'ըլլար. ջուրը իր ընթացքի մէջ շատ աղտոտ տեղերէ կանցնի, բայց մենք մաքուր վիճակի մէջ կը խմենք զայն։ Շատ անգամ մարդիկ ենթադրութիւններ ընելէ վերջ ճշմարտութեան կը հասնին. վիպասանութենէն կրնանք իրականութեան ալ անցնիլ։ Բայց ինչո՞ւ վիպասանութիւններն կեղծիք պիտի ըլլան. միթէ թշուառներուն մէջ դրուածները սո՞ւտ են. միթէ ամէն օր չե՞ն պատահիր ատոնք. բայց հոգ չէ թէ թշուառուհւոյ մը անունը Ֆանթին կամ Վիրժին եղած ըլլայ. սիրահարի մը անունը Մարիուս կամ Պօղոս։ Անուններու շատ կարևորութիւն պէտք չէ տալ, պատմուած գործերուն նայելու է։ Հոգ չէ, թող անունները չինծու եղած ըլլան, գործերը իրական և ստոյգ են և այնչափ իրական որ ամէն օր տեղի կունենան։

Ալ այնուհետև սկսայ վիպասանութեանց կարևորութիւն տալ և ոչ թէ միայն իբրև զբօսանք կարդալ զանոնք, այլև իբրև փիլիսոփայական գործեր։ Վիպասանութիւնները զբօսանքի միջոցաւ ճշմարտութիւնը կ'ուսուցանեն մեզ. անոնք աւելի սրտին խօսելով կ'ուսուցանեն, քան թէ մտքին։ Իմ խօսքս այն խել մը թերթեւոգի վիպասանութեանց համար չ'է զորոնք գրած ըլլալու համար միայն կը գրեն անարժէք գրիչներ և աւելի սրտեր կ'ապականեն, քան թէ կը շինեն։ Իմ խօսքս Հիւկոյի, Ռուսոյի, Պէրնարտէն տը Սէն Բիէրի և Էսժէն Սիւի պէս վիպասանաց համար է որոց քով այդ անարժէք բանախօսներն կը նմանին Պառնաս լեռան ստորոտը ճախիններուն մէջ կռնչող դորաներուն։

Երբ հրապարակի վրայ երևցանք ժողովրդեան հետ խօսելու համար, ճշմարտութիւնը մեր նուիրական պարտքը համարեցինք։ Սակայն կան ճշմարտութիւններ զորոնք իմ տկար

ՊԷՐՆԱՐԴԷՆ ՏԸ ՍԷՆ-ԲԻԷՐ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՏՆԱԿԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՐՈՅԵԱՆ ԷՖԷՆԴԻՆԱ

1874

—Կլսուի թէ Ղազարոսեան Կաթոլիկէ էֆէնտիի խմբագրութեամբ ՆՈՒՎԷԼԻՍԹ անուն Գաղիերէն լրագիր մը պիտի հրատարակուի։

—Շաբաթ գիշեր Գաղղիուց հրդեհ մը պատահեր է։ Թէպէտ տուն մը միայն հրոյ ճարակ ըլլալով, շուտով առաջն առնուեր է, սակայն գաւառ մը փլչելով, ջրհանկիր մը աւերակաց տակ մնացեր։ Եւ ուրիշ մ՚ալ դանդաղէս վիրաւորուեր է։

ԳՐԱՄԱԿԱՆ

Գ. ՊՕԼԻՍ ՑՈՒՆԻՍ !

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Մի՛ մակին 100 դրամի հաշուով

	ԴՐԱ	ՓԱ
Անգլ. ոսկի	110	20
Գաղղ. ոսկի	87	50
Բոշ	89	15
Գրամից	31	20
Ներքսակ Մէճիտ ասլր.	102	
Հինգնոց	4	[illegible]
Ալթանաքը	8	20
Ոսկին	104	50

ԸՆԹԱՑՔ ՍՐԱՖԻԹՂԹՈՑ

Ընդհ. պարտ. Սրա. բաց	50	00
բարձր դին	50	17
ցած »	30	17
Յիսկս օրվ գոց.	50	[illegible]

Փրիատուիթիւն 65ի	528	
» 65ի	530	
» 69ի	268	
» 72ի	80	
Գրեսի Ծէնէրալ	9	10
Սօսիէթէ Ծէնէրալ	8	12
Սօսիէթէ Օթոման		
Կ. Պոլսոյ Պանդոյին անկար.		
Ռումելիի երկա. Սրա. հին	111	1/2
» » » նոր	85	1/2
Թրամվէյ «անկարօն»	520	

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻՆԱՍ ՁԵՐՄԱՋ

ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

Տուչը, Ճաշը, Սառնը, Նամբեր
Գրաբարեանները, Սրբոյ Խաչը

ԳԻՆ 15 ԴՐՇ.

Այս գիրքին կնդրսնաւորին է Մկրճան-Չարչը Սրապեան Պաղտասար ազգայի դրատունը. միւս Հայ դրավաճառներն ալ կը ծախեն զայն։

Հնդկակը, իւր այս առաջին գործին մէջ, փորձած է մի վերջնական կանոնաւորութիւն տալ մեր արդի ազգային լեզուին. հայ դրագէտները կը հրաւիրեմ քննել զայն։

Այժմն կարգի անձեր կրնան օգտակարապէս ընթեռնուլ այս գիրքը, մանաւանդ ուսանողները, նոր սերունդը։ Ներածէֆէնտիին եռանդուն պրիչն ու բեղմնաւոր հանճարը՝ որ արդէն իսկ հանրածանօթ են, կրնան ինքնին առհաւատչեայ մը համարուիլ այս գործոյն արժէքին։ Այժմն քանաքէր անձանց դրատան մէջ իբրեւ ամենահարկաւոր գործ մը դանուելու է։

Պարզեւարաշխութեան և կամ ուրիշ առթիւ գպրոցի ուսանողաց և ուսուցիչաց անձանց ալ ընծայ տրուելու ամենայարմար գիրք մ՚է։

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ ՄԵԾԱՆՈՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՄԻՐԱՅԻ ՊԷՁՃԵԱՆ

Այս պատկերը սրաւն ներքեւ Յ. Ս. Մալէկեան էֆէնտին մէկ դիպէցիկ ոսանաւոր մը գրած է, կը ծախուի 100 փեսի։

ՊԱՉԷՆ ՄԱՐՍԱՋԱԽՏԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Այս հեռաքրքրաշարժ գրքին 31երրորդ տեսակն ալ հրատարակուած ըլլալը՝ կը ծախուի ամեն դրավաճառաց քով տեսակը 40 փեսի։

Լրագիրս թերթ առ թերթ 20 փեսի։ կը ծախուի

1. Լրագրավաճառաց չեռօք.
2. Կամուրջի դիմաց պարագայնը.
3. Գահճէ դափուն լրագրավաճառ և ջրավաճառ Մ. Գօրոս ապայինխանութիւն.
4. Ռ. Զարգին Գրէնիկեան գրատունը.
5. Սկրտչէր հասաւէտ թիւ 7, Մ. Ռիկը Թրօսի գրատունը։

Գ. Պարսամիոս Հայոց Եկեղեցւոյ փոքրիկ թիւ 1 Լրագրաճառն Մկրտչէ էֆէնտիի ապարանքը Հայոցիկն, Գաղղիերէն, Յունաստանի դիրք, ռեստորան, լրագիր, յոյսարարիս թիւն, յունարէն կաւորուիմեան ատենագրութիւն, և այլն կը տպուին մանրուք կերպով և աժան գնով։

ՏԵՐ ԼՐԱԳՐՈՑ ՅՈՎՀԱՆԵՍ Գ. ԲԼԻՍԵՆԵՆ

ՏՆՕՐԼԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԻՐՈՒՅԼԻ ԼՐՍԼՐՇԵԱՆ.
ՂԱԼԱԹԻԱ.
ՀԱՅՈՑ ՆԱԵՂԵՑԻՈՑ ՓՈՂՈՑ ԹԻՒ 1

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Վիպասանութիւններ կամ մանրավէպեր կարդալու հաճոյքը շատերուն ցուցուցած փափաքին համակաւակ՝ չէի ախորժեր էլ այդպիսի գրքեր կարդալով ժամանակս անցուցանել։ Երբ աղջկայ մի, կը սիրէի պատմութիւններ կարդալ։ Բայց երբ խորհելու հասակն եկայ թեւակոխեալ, մեծքս կուզէր բարձրերը թռչիլ. վէպերը ողբալոյն գրքեր կը համարեի և կրսէի ինքնին թէ ճշմարտութիւնը իր մերկութեանը մէջ պէտք է տեսնել, առանց քօղի, առանց սեթեւեթի։ Ճշմարտութիւնը կեղծիք չը վերցուներ։ Վիպասանութիւնը՝ իբրև շինծու գրուած մը՝ չը կրնար զմեզ ճշմարտութեան առաջնորդել. խաղ-արկեն ելյս չը ծաղիր, տուէն ճշմարիտ չը ծնիր։

Այս խորհրդածութեամբ՝ իմ ընթերցանութեան ժամերս ուտմանց, պիտութեանց և բարոյականի վերաբերեալ գրքերուն կը նուիրեի և առ այս կը յորդորեի ուրիշներն ալ։

Իմ կարդացած առաջին վիպասանութիւնս Վիրգիոր Հիւգոյի ԹՇՈՒՌԱՌՆԵՐՆ եղաւ։ Այդ գիրքը ոչ թէ իբրև վիպասանութիւն փափաքեցայ կարդալ, այլ իբրև հռչակաւոր փիլիսոփայի մը գործ։ Ինծի համար դիւթական ջղութիւն մը ունեցաւ ան։ Կարդալէս վերջը կարծես թոլորովին փոխուեցայ, ուրիշ մարդ մ՚եղայ։ Թշուառները նոր Աւետարան մը եղան ինձ համար։ Նոր աշխարհ մը կազմեց իմ մտացս առջեւ։ Նոր մարդերը տեսայ հոն. ազգային տեսիլներովը յափշտակուեցայ և քսի։ Սեղծիքը ճշմարտութեան կատարեալ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ